ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Ի պատասխան № **SILD-AFG-09 Աբովյան, Մեծամոր, Փամբակ և Նոր Հաճն համայնքների համար բազմաֆունկցիոնալ էքսկավատորների և Սևան համայնքի համար բազմաֆունկցիոնալ մինիամբարձիչի գնում (բաղկացած 2 լոտից)** մրցույթի վերաբերյալ 05.06.2023թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց N 1՝

Հարգելի գնահատող հանձնաժողով՝ Հրավերով սահմանվել է, որ Նշված մրցույթի շրջանակներում մատակարարված ապրանքները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հիշատակված Մաքսային միության հանձնաժողովի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 823 որոշմամբ հաստատված «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 010/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին: Նշված պահանջներին համապասխանության փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել Մրցութային հայտով:

Վերը նշված սահմանումը խտրական է և ոչ հավասար մրցակցության ապահովման ուղղված պարտադիր պահանջ, որը հնարավորություն է տալիս վերը նշված մրցույթին մասնակցության հայտ ներկայացնել մի քանի մասնակցի, այնինչ, եթե նշված պահանջը պարտադիր լինի ոչ թե մրցույթային հայտի փուլում՝ այլ մատակարարման փուլում, ապա հնարավոր կլինի մասնակցության հայտ ներկայացնել ավելի շատ մասնակիցներ՝ միևնույն ժամանակ պահպանելով գնահատող հանձնաժողովի կողմից սահմանած նորմը:

Խնդրում ենք վերը նշված պահանջով նախատեսված համապատասխանության փաստաթղթեր ներկայացնելը պարտադիր լինի ոչ թե մրցույթային հայտի փուլում՝ այլ մատակարարման փուլում:

Կանխավ շնորհակալություն:

Պատասխան՝

«Հարգելի հայտատու,

Հաշվի առնելով, որ մրցութային հայտով մատակարարի կողմից առաջարկվում է հստակ մոդելի և մակնիշի ապրանք, ուստի խնդրում ենք առաջնորդվել Հայտեր ներկայացնելու հրավերի (ՀՆՀ) պահանջներով։»

Հարգանքով,
Ռոզա Դանիելյան
№ SILD-AFG-09 մրցույթի քարտուղար
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
07.06.2023թ.